այնքան ծանօթ էին բոլոր անցքերը, բոլոր շաւիղները, որքան ծանօթ էին նրանիր ձեռքի հինգ մատները: Արտոսը եւ Կապուտ Կողը, իրանց ոլոր-մոլոր շղթաներով հիւսոելով միմեանց հետ, կազմում են Ռշտունեաց գաւառի լեռնային ցանցը: Այդ հսկայական ցանցը մի մեծ ծուղակ է, որ, կարծես, այդ քմահաճ լեռները պատրաստել են մարդիկ որսալու համար: Մենք խարխափում էինք այդ ծուղակի մէջ:

Երբեմն հանդիպում էին մթին անտառներ: Երբեմն հանդիպում էին ուղեւորների խումբեր, որ գնում էին մերձակայ արօտատեղիները, իրանց անասունների մօտ: Նայելով այդ անտառներին, նայելով այդ մարդիկներին, ինձ թւում էր, որ այդ վայրենի, լեռնային երկրում ամէն ինչ նոյնպէս խոշոր էր, նոյնպէս խիստ էր, որպէս շրջակայ բնութիւնը: Վաղեմի դիւցազունների փոխարէն ապրում էր մի խոշոր ժողովուրդ: Վաղեմի հսկայ անտառների փոխարէն՝ ամեհի ծառատունկ: Բայց անցեալ փառքն ու մեծութիւնը մաշել, տրորել էր ժամանակը... Միայն իր վեհութեան մէջ մնացել էր անխորտակելի Արտոսը:

Անհամբերութիւնը խեղդում էր ինձ, մտածում էի, ե՞րբ պէտք է դուրս գանք այդ մթին վիհերից ու վիրապներից: Գոնէ լոյս լինէր: Հորիզոնը ամէն կողմից փակուած էր բարձր լեռներով: Հեռուն չէր երեւում: Նայում էի դէպի երկինք, ձիւնագոյն ամպերը լողում էին օդի մէջ: Նրանց մի կողմը ոսկու գոյն էր ստացել: Երեւի, արեւը ծագել էր: Բայց մեր գտնուած ձորերի մէջ դեռ տիրում էր գիշերային խաւարը: Բոլորովին պայծառ օրերում անգամ՝ այդ ձորերի մէջ լոյսը պակաս է լինում: Իսկ այն գիշեր անձրեւ էր եկել, եւ վաղորդեան մառախուղը լցրել էր ձորերը:

Չարագուշակ նապաստակի հանդիպումը այս անգամ եւս մնաց առանց որեւիցէ չար հետեւանքի: Մենք անցանք բոլոր վտանգաւոր տեղերը առանց փորձանքի, միայն սաստիկ ջարդուած, սաստիկ յոգնած: Բայց իմ յոգնածութիւնը բոլորովին փարատուեցաւ, երբ բարձրացանք մի սարաւանդի վրայ, երբ կրկին մեր առջեւ բացուեցաւ կապուտակ ծովը, եւ երբ Ասլանը, ձեռքը մեկնելով դէպի մի հին քաղաքի աւերակները, ասաց.

— Ահա՛ Ոստանը:

Ոստա՞ն... այդ անունը ծանօթ էր ինձ երեխայութիւնից: Գրքերի մէջ նրա մասին ոչինչ չէի կարդացել: Բայց շատ անգամ լսել էի, որ մայրերը ձեռքի վրայ օրօրում են, վեր-վեր են թռցնում իրանց փոքրիկ մանուկներին, երգելով մի երգ, որի մէջ զանազան խոստմունքներ են անում երեխային, թէ երբ նա կը մեծանայ, ինչ կը բերեն նրա համար, խոստանում են արծաթապատ զէնքեր, ոսկենկար հագուստներ, հրեղէն ձի եւ այլն, եւ մայրական